

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՈՒԱԾ ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ

1. Մարդկությունը թեակոխել է մոր հազարամյակ, և հայ ժողովուրդը մոր հազարամյակի սկզբում մշտում է քրիստոնեական իր հավատքի 1700-ամյակը: Քրիստոնեությունը և ի մասնավորի Հայ Առաքելական Եկեղեցին հայության համար եղել են գոյատևման, հոգևոր ամրացման և միասնական ինքնության ամրակուռ խարիսխ բոլոր ժամանակներում: Այսօր ևս այդ հավատքը մեր հոգևոր գլուխն է, որ ամեն ջանք ի գործ է դնում ավելի ամրանալու և ավելի առաջ գնալու համար:

Սուրբ Գրիգորի ջանք բարձրացել էր մի այնպիսի ժամանակում, երբ թվում էր, թե վտանգվում է մեր ժողովրդի ինքնությունը, կարծես թե մախրող հազարամյակներում ստեղծված մեր մշակութային և մտավոր գանձերը ոտնատակ են լինելու, երկյուղ կար, թե մոռացության են մատնվելու մախրող ժամանակների մեջ երևան եկած մերագնյա արժեքները: Եվ այդ ջանք բարձրացավ, որպեսզի մորույն լուսավորվեր ոչ միայն մեր ապագան, այլև պայծառության մեջ պահվեր անցյալը: Ապագայի և անցյալի տարածությունը մոր լույս էր առնում, լցվում էր Քրիստոսի սիրով: Ավանդությունն ազդեցվում էր ապագային, հոգևոր ունեցվածքին ավելանալու էր մոր ստեղծվելիքը, իսկ երաշխիքը մեծ էր:

2. Արդի հայագիտությունը, մասնավորապես հայոց լեզվի պատմության ավելի հանգամանալից ուսումնասիրությունը, կարծում ենք, կարող է իր որոշակի ներդրումն ունենալ Հայ Եկեղեցու մշակութային ժառանգության մորույն վերհանման ու գնահատման գործում: Նկատի ունենք հատկապես հայոց լեզվի բառապաշարի, մանավանդ տերմինաբանության առանձին, գիտական մոր չափանիշներով վերլուծության և ծագումնային առնչությունների մեկնաբանության կարևորությունը:

Հայ Եկեղեցին ունի հարուստ տերմինաբանություն, որն առաջացել է ոչ միայն համապատասխան գրականության թարգմանության բերումով տեղ գտած փոխառությունների և բառային պատճենումների հաշվին, այլև հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական (հ.-ե.) ծագման բառերի ու բառային անվանումների մոր իմաստային կիրառության (իմաստային փոփոխության) շնորհիվ: Այդ տերմինաբանության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայ Առաքելական Եկեղեցին այս հարցում ևս եղել է ավանդապահ: Հայոց լեզվի բառապաշարի շատ երևույթներ ծառանգվում են և մոր պայմաններում դառնում որոշակի հասկացությունների անվանումներ: Ուստի հայ եկեղեցական տերմինաբանությունն այսօր կա-

րող է դառնալ առանձին ուշադրության առարկա՝ կապված հայոց լեզվի պատմության առանձին խնդիրների նորովի լուսաբանման, ըստ հնարավորին առավել ճիշտ լուծման համար:

3. Հայ Եկեղեցու ժամասացությունը, արարողակարգի շատ երևույթներ, ինչպես նաև սրբասացություններն ու փառաբանումները լեզվական առումով արտահայտվում են հատուկ ճշանակումներով: Նկատելի է, որ այնպիսի առաջնային անվանումներ, ինչպիսին են առաօտ, Աստուած, արեւագալ, գիշեր, լոյս, մայրամուտ, տէր, ցերեկ և այլն, ունեն վաղմջական ճշանակումներ, գալիս են հետավոր անցյալից: Եվ քրիստոնեական Եկեղեցին այդ անվանումներին ոչ այնքան հաղորդել է բոլորովին նոր իմաստ, որքան որ վերաիմաստավորել է քրիստոնեական հավատքին համապատասխան՝ պահպանելով հնդեվրոպական ծագում ունեցող այդ բառերի ամենամախնակա՝ իմաստներն ու ճշանակությունը: Այսպես, օրինակ, «քրիստոնեության մուտքով դիք բառն ստանում է միայն հեթանոսական աստծու իմաստ՝ ի հակադրություն աստուած բառի. ավելի խիստ հակադրությամբ հեթանոսական աստծու համար ստեղծվում է չաստուած բառը»¹: Բառագիտական և իմաստաբանական այս ճիշտ մոտեցումով էլ կարելի է խոսել մյուս բառերի կամ արմատների մասին, սակայն այստեղ մեր ուշադրության առարկան միայն աստուած բառն է, որին էլ անդրադառնում ենք առաջին հերթին:

4. Հայերեն աստուած բառն ունի հնդեվրոպական ծագում, պատկանում է հայերենի բառապաշարի բնիկ շերտին և ունի մի շարք զուգահեռներ ցեղակից լեզուներում: Սույն ձևակերպումը կարող է ճիշտ լինել, քանի որ ի մկատի ենք ունենում մախկնիում եղած մեկնությունների և բացատրությունների տվյալները, հաշվի ենք առնում այս հարցում մինչև այժմ երևան եկած ստուգաբանական փորձերը: Այնուհետև, այս դեպքում ևս համոզե ենք բերում նոր մոտեցում, այն է՝ տվյալ բառի կազմության, նրա հետ առնչություն ունեցող արմատների և բառաձևերի պարզաբանման դեպքում առաջնորդվում ենք լեզվաբանական տաբերակայնության (վարիատիվության) սկզբունքով և ըստ այդմ քննում աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը²:

4.1. Հայ մատենագրության մեջ աստուած բառը գործածվել է բավականին բարձր հաճախականությամբ: Այն Հայ Եկեղեցու տերմինաբանության առանցքային, առավել կարևորություն ունեցող միավորներից է: Այդ բառով կազմվել են բազ-

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 385:

² Հմմտ. G. B. Djahukian, A Variational Model of the Indoeuropean Consonant System. HS (HL), 1990, Band 103: Idem, Variative Modelle des urindoeuropaischen und der begriff der partiellen parallelen (isoglossen), "Studia indogermanica", 1997, 1: Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Երևան, 1998: V. G. Hambardzumyan, Linguistic Variations and the investigations of the Phonemic Variants of Old Armenian literary Language. "Sixième Colloque Internationale de Linguistique Armenienne. Abstracts", Paris, 1999.

մաթիվ բարդ և ածանցավոր ձևեր, որոնք ևս կիրառությամբ զգալիորեն տարբեր են, գործածության հաճախականությամբ՝ բավականին յուրահատուկ³:

4.2. Բառի ծագումն ու իմաստաբանությունը ոչ միայն գրավել են անցյալի հեղինակների և համեմատաբար նոր ժամանակի բանասերների ուշադրությունը, այլև եղել են համեմատական լեզվաբանության, հատկապես հայերենի մաթագրային շրջանի պատմության տարբեր հարցերի լուսաբանմամբ զբաղված թե՛ հայ և թե՛ օտարագի լեզվաբանների առանձին ուշադրության առարկա⁴:

Մինչև այժմ երևան եկած բանասիրական մեկնությունների, աղբյուրագիտական մեկնաբանությունների և ստուգաբանական վերլուծությունների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ. աստուած բառի վերաբերյալ տարբեր ժամանակներում և առանձին հեղինակների կողմից ասվածը չի կարելի համարել անառարկելի և վերջնական: Ավելին, դրանք մնում են զանազան կարգի մեկնաբանության և բացատրության սահմաններում, հանդիսանում են բառի ստուգաբանության, առավել ևս տիպաբանության ամենևին չհաջողված կամ մասամբ հաջողված փորձ:

4.3. Աստուած բառի մեկնության և բացատրության, այլև ստուգաբանության պատմությանն անդրադարձել են տարբեր հեղինակներ, հատկապես Հ. Աճառյանը և Յու. Հիլմարսոնը⁵: Այս հանգամանքը նշում է նաև Գ. Զաֆուկյանը⁶, և կարելի է ավելացնել, որ հետազայում ևս երևան են գալիս նույն խնդրի լուծման նպատակով գրված աշխատանքներ⁷:

ա) Հին հեղինակների մեկնաբանությունները և մեկնությունները այլ բան չէին, քան աստուած բառի արտաքին նկարագրություն (աստուած<աստ ած կամ էած, ազդու ած, ազդուած, նաև՝ հաստիչ կամ աստ, յաստիս ածող, աս «ասել, խոսք, շունչ» և տուած «տվող» և այլն): Ըստ հետագա հեղինակների՝ հայ. աստուած բառը կապվում է իրանական, թրակյան կամ փյուրգիական այս կամ այն ձևի հետ (հմմտ. Աժդահակ, գեմդ. *astavañit*, այլև *astvat*, փյուրգ. *Asduat* «Աստված», թրակ.-փյուրգ. *Σαβάθιος*, *Σαβάθιος* և այլն): Կարծում ենք, որ հարցի լուծման առումով համեմատաբար ճիշտ ճանապարհով են գնացել, սակայն վերջնական լուծում չեն գտել այն ուսումնասիրողները, որոնք հայ. աստուած բառի մեջ տեսել են հայ. *տու կամ *տուած բաղադրիչը՝ իբրև առանձին միավոր, այն կապելով հնդեվրոպական մյուս լեզուների այս կամ այն ձևի հետ, այլև բխեցնելով հ.-ե. *diu- արմատից: Վերջին

³ Տե՛ս Մխիթար Սեբաստացի (և աշակերտներ), Բաղգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769. Գ. Ալեքսիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Ալեքեան, Նոր բաղգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837, էջ 320-333:

⁴ Ավելորդ ենք համարում այստեղ մեկամեկ նշել հարցին վերաբերող գրականությունը, մանավանդ որ դրանց անդրադարձել են մաթտորդ ուսումնասիրողները (տե՛ս ստորև):

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 280-281: J. Hillmarsson, Armenian astuac "God", "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 5-15.

⁶ Տե՛ս Գ. Զաֆուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 1, էջ 51-52:

⁷ E. P. Hamp, Remarks on astuac, "Annual of Armenian Linguistics", vol. 5, 1984. pp. 87-89.

դեպքում նկատի ունենք հմերից՝ Կ. Վրդ. Ծահանգարյանի, իսկ մոր հեղինակներից՝ Վ. Պիզանիի մոտեցումը⁸:

բ) Վ. Պիզանիի հայ. աստուած բառի համար վերականգնել է հ.-ե. **ag'-diu* - *ag'* ձևը, որտեղ կարևոր է հ.-ե. **diu* - բաղադրիչի առանձնացումը: Հետագա ուսումնասիրողները չեն ընդունում մասն վերականգնումը⁹:

գ) Գ. Զահուկյանը հայ. աստուած բառի ստուգաբանությունը տալիս է, մախ՝ երկու կարգի հավանականության սահմաններում. «Թեև ստուգաբանության եղած փորձերը չի կարելի վերջնական համարել, բայց բոլոր դեպքերում էլ գերադասելի են բուն հայերենով մեկնաբանելու փորձերը. մասնավորապես մեզ հավանական է թվում այդ բառի տու-ի (*տիւ) մեջ տեսնել հ.-ե. **diu* - «երկնքի հայր, աստված» արմատը և առաջին մասը կապել հ.-ե. *ansu*- հիմքի հետ, որտեղից ծագում են հհմդ. *asu-ra*-, ավեստ. *ahura* «իշխող» բառերը (վերջինիցս ծագում է Ահուրամազդայի անունը, որից հայկական Արամազդ-ը): Անհավանական չէ նաև (հ)աստուած «ի հաստումն ածող, հաստող, հաստատող» մեկնաբանությունը, եթե ենթադրենք հին «ածող, բերող» իմաստով (հմտ. գրաբարյան գթած «գթացող» և ողորմած «ողորմացող»)»¹⁰: Այնուհետև, Գ. Զահուկյանը գտնում է, որ աստուած բառը կարող է ունենալ փոքրասիական ծագում¹¹:

Հայ. աստուած և (հ)աստուած բառերի միջև կապ տեսնելը գալիս է ավելի վաղ ուսումնասիրողներից¹², և մասն կապն իրոք վերջնական և իրական չէ, այլ մնում է հավանականի սահմաններում: Այնուհետև, մասն կապ տեսնողները որևէ մախաձև չեն վերականգնում, թեև Հ. Պեդերսենը, ոչ անկախ Ֆ. Կյուգեից, մատնանշում է ցեղակից լեզուների այս կամ այն ձևը¹³:

դ) Գ. Մելիքիշվիլին փորձել է հայ. աստուած բառը կապել ուրարտ. *Aš tiuzi* «աստված, աստծու պատկեր» բառի հետ, որը հանդիպում է Արգիշտիի մի արձանագրության մեջ¹⁴: Կարելի է հակառակը կարծել, այն է՝ ուրարտ. *Aš tiuzi* բառի աղբյուրը հայ. աստուած ձևն է: Այսպես կարծելու հիմք են հանդիսանում ոչ միայն ուրարտական արձանագրությունների բնագրերի մոր մեկնաբանությունն ու դրան-

⁸ Հմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 281: V. Pisani, Der Gott als "Verteiler" und armenisch Astuac, "Lingua e Culture", 1969, p. 257-269, տե՛ս նաև «Հանդես ամսօրեայ», 1961, 75, էջ 549-562:

⁹ J. Hilmarsson, op. cit., p. 6-7, B.P. Hamp, op. cit., Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, մախագրային ժամանակաշրջան, էջ 274:

¹⁰ Գ. Բ. Զահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 52:

¹¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, մախագրային ժամանակաշրջան, էջ 274:

¹² Հմտ. Գ. Ալեքսեյան, Խ. Սիրմելեան, Մ. Ալեգրեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 320:

¹³ H. Pedersen, Zur akzentlehre. "Zeitschrift für vergleichende Sprachforschung", 39, 1906, ss. 239, 243. Idem, Kleine Schriften zum Armenischen, Hildesheim-New York, 1982, ss. 107, 111: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 281:

¹⁴ G. Melikishvili, Urartu und das südliche Transkaukasien, "Georgica", Jena-Thilisi, 1980, ss. 35-36.

ցում տեղ գտած ձևակերպումների ստուգաբանությունը, այլև խեղական լեզուների ուսումնասիրության, հայասերենին վերաբերող տվյալների մեկնաբանման հետ կապված մոր աշխատանքների արդյունքները¹⁵։ Տվյալ դեպքում ուրարտ. AՏ tiuzi ձևն արտացոլում է հայ. աստուած բառի հնչյունական այն վիճակը (հմմտ. աշ, ու>իու, ծ>զ հակադրությունները), որում կարող էր ինչ-որ չափով դեր խաղալ սեպագրական ստանդարտի հետ կապված առանձնակիությունը։

5. Հայերենը հնդեվրոպական այն լեզուներից է, որի գրավոր աղբյուրների, ինչպես նաև ոչ-գրական տարբերակների (բարբառների) տվյալները հարկադրում են համեմատական ուսումնասիրության այնպիսի մոր մոտեցման մշակման, ինչպիսին է տարբերակայնությունը (վարիատիվությունը)¹⁶։ Հայերենի գործառական և տարածքային բոլոր շերտերին վերաբերող լեզվական միավորների տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը մեծապես նպաստելու է ոչ միայն հավաստի ստուգաբանություն չունեցող, այլև ամենևին չստուգաբանված բառարմատների և քերականական ձևերի տարբերակված վերլուծության և ստուգաբանության, տիպաբանական վերականգնման և բնութագրման գործին։

ա) Հ. Հյուբշմանի և նրա հետևորդները հետագա ուսումնասիրողների աշխատություններն այս առումով հասել են ամբողջական և գրեթե սպառիչ մի վիճակի, որն այսօր կարող է միայն ամփոփվել հանդիսանալ մոր մոտեցումներով ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար¹⁷։ Ի տարբերություն Հյուբշմանի ուսումնասիրության սկզբունքների, որոնք մեզանում լայն ընդունելություն են գտել և դարձել խիստ ավանդական, հայերենի տարբեր կարգի երևույթների ուսումնասիրության գործում մոր, տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը կարող է որոշակի հեռանկար ունենալ հատկապես հայոց լեզվի անհայտ ծագման բառերի առումով։

բ) Հնդեվրոպական ծագման հայերեն մի շարք բառեր ու բառաձևեր երևան են գալիս երկու և ավելի տարբերակներով՝ կապված ոչ միայն ձայնավորների տարբեր աստիճանի փոփոխության (ձայնդարձի), բաղաձայններին մախորդող դիրքում դրանց երկբարբառացման (ձայնավոր +յ կամ ի ձայնորդ), ինչպես նաև բաղաձայնների հերթագայության, պատմական զարգացման ընթացքում դրանց հնչարտաբերական տարբերակվածության հետ։ Այսպես, օրինակ, առու-ոռոգ(անեմ), առոգ(անեմ), արեւ-արեգ(ակն), գաղո «ցեխ, տիղմ» - գոռ «ցեխ, գայո», լիճ - լիկ «ավազան, լիճ», լափու(կ) (բրբռ.) - լեփան (բրբռ.), «տափակ քար», խութ «ծովածայր» - խուչ (բրբռ.), խոչ(ընդոտ), հոլոսեմ -հոռոսեմ «ոռոգել», մայր - մո(այլ) «մութ,

¹⁵ Հմմտ. Գ. Զահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 2000, 1, էջ 128։

¹⁶ Հմմտ. V. G. Hambardzumyan, Linguistic Variations and the investigations of the Phonemic Variants of Old Armenian literary Language, p. 25։

¹⁷ Նկատի ունենք Հ. Հյուբշմանի և նրա դպրոցին հետևող լեզվաբանների կարևորագույն աշխատությունները, որոնց թվարկումն առանձնապես կարևոր չէ, որովհետև դրանք մեծապես հայտնի են, առավել չափով շրջանառության մեջ դրված։

խավար», շող -(ն)շող, պալ «քար» - պաղ, պղպղաքար, տիլ «ցեխ, տիղմ» - տիղ(մ), քերծ-քուրշ «քերծ, ժայռ» բառերը հայերենում ներկայացնում են ժամանակային, տարածքային և գործառական որոշակի տարբերակայնություն¹⁸։ Նման երևույթ-տրամական այնպիսի մոր օրենքներ, որոնք կարող են դառնալ միջոց հայերենի տարբերակային ուսումնասիրության համար։

գ) Հայերենի արմատական տարբերակների առանձին քննությանն անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ հարցին մկրելով ոչ միայն ընդհանուր բնույթի, այլև հատուկ աշխատություններ¹⁹։ Այդ կարգի լեզվական իրողությունների ուսումնասիրության մեջ մոր մոտեցման գործադրման դեպքում կարող է պարզվել, որ զարգացման տևական պատմություն ունեցող հայերենն այս դեպքում ևս ներկայացնում է ուշագրավ իրողություններ։

դ) Հայերենի թե՛ մախագրային և թե՛ գրավոր փուլերում երևան եկած տարբերակային ձևերն, անշուշտ, ծագումնային և տիպաբանական քննության առարկա կարող են լինել ոչ միայն ձևական (հնչյունական), այլև իմաստային (արմատի կամ բառի հիմքում ընկած երևույթի անվանման) մկատառումով։ Այս տեսակետից, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ. աստուած բառի ծագումն ու տիպաբանական բնութագրումը։

6. Հայ. աստուած բառը թե՛ ձևով (բառակազմորեն) և թե՛ իմաստով (հին աշխարհին բնորոշ հասկացության անվանում) կարող է ստուգաբանվել հայերենի միջոցներով և տիպաբանորեն հիմնավորվել ցեղակից լեզուների մեջ առանձնացվող մոր տվյալներով։

Աստուած բառն ունի ոչ թե պարզ, այլ բառակապակցորեն բարդ կազմություն։ Եվ տվյալ դեպքում հաշվի ենք առնում ոչ միայն այդ, այլև հետևյալ հանգամանքները։

ա) Նման կազմություն ունեցող բառի ծագումնային բացահայտման, տիպաբանական վերլուծության իրական հիմք է հանդիսանում հ.-ե. լեզուների հետ անցկացվող հնչյունական և իմաստային համեմատությունը։

բ) Հայերենի բնիկ բառապաշարի մեջ աստուած բառն ունի առաջնային մշակակություն՝ կապված հ.-ե. ընդհանրությունից եկող հասարակական կառուցվածքի և հոգևոր ըմբռնումների մեջ աշխարհի առասպելական և դիցական պատկերի ձևակերպման հետ։

գ) Հայ. աստուած բառի մոր, տարբերակային (վարիատիվ) մեկնաբանության մեջ կարևոր տեղ ունեն ցեղակից լեզուների կրող ժողովուրդների առասպելաբանական և դիցաբանական տվյալները, որոնց զուգահեռներն ու համընկումները

¹⁸ Հմտ. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, էջ 206-207։

¹⁹ Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, сс. 300-313. G.B. Djahukian, On Etymological Doublets and Parallels of Armenian, "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 23-34.

գտնում ենք հայոց բանավոր, այլև գրական հուշարձանների միջոցով մեզ հասած ավանդությունների մեջ:

6.1. Հայ. աստուած ձևից առանձնացնում ենք առաջին հերթին *տուած բաղադրիչը. հմմտ. խեթ. Šiṽ az «ցերեկվա աստվածություն», պալ. Tiṽ az «նույնը», լուվ. Tiṽ at «(երկնքի) աստված», հհնդ. Dyáuš «երկինք», հուն. Ζεύς (սեռ. հոլ. Διός) «աստված», լատ. deus (հլատ. Diouis) «աստված» և այլն²⁰:

*Տուած ձևը նույնպես բաղադրելի է, քանի որ ծագումնաբանորեն առնչվում է ցեղակից լեզուների այնպիսի ձևերին, որոնք առհասարակ արտահայտում են «աստված» իմաստը՝ ի վերջո կապվելով «լույս տալ», «փայլել», «ճառագել» (նաև՝ «թվալ», «երևալ») իմաստներին²¹: Ըստ այսմ, հայ. *տուած, այլև (աս)տուած անվանումները նախնական իմաստով նշանակում են «լույս», «լույս տալը»:

ա) Հայ. *տուած ձևի մեջ առանձնացնում ենք *տու (հնչումով՝ *տոու) արմատը, որին զուգահեռ են՝ խեթ. š iuš (հայց. հոլ. š iun, սեռ. հոլ. š iunaš , հմմտ. հայ. Սանաս-ար) «աստված», լուվ. ^ԸTiṽ az «աստված» հհնդ. Dyáuš «աստված» (նաև՝ dyāuš «երկինք», հմմտ. ուրարտ. Diauš i, որը թերևս փոխառություն է միտ. արիե-րենից, կամ վերջինիս միջոցով՝ հայերենից), հուն. Ζεύς «(երկնքի) աստված» (սեռ. հոլ. Διός), միկ. հուն. di-we, հլատ. Diouis (սեռ. հոլ. Jouis) «Յուպիտեր», օսկ. Diúvci «Յուպիտերին» և այլն²²:

բ) Բերված ձևերի հիմնական մասն, իբրև «երկնքի կամ արևի աստված» հասկացության անվանում, ցեղակից լեզուներում համընդ է գալիս որպես հատուկ անուն: Դրանց համար վերականգնվում է (ընդհանուր իմաստով) հ.-ե. *t'j eṽ - «աստված» բառարմատը: Վերջինս ունի իր կանոնավոր ձայնավորմամբ հ.-ե. *t' eṽ y o- տարբերակը. հմմտ. հհնդ. devá- «աստված», ավեստ. daē va- «դև», լատ. deus «աստված», divus «աստվածային», հիոլ. dia (սեռ. հոլ. dé) «աստված», հիսլ. tívar «աստվածներ», պրուս. deiws «աստված», լիտ. diẽ was «աստված» և այլն²³: Այս ձևից է թերևս նաև հայ. դի-ք (<*տի-եռ, հնչումով՝ *տի-եռ) «աստվածներ» բառը²⁴:

²⁰ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-2, Тбилиси, сс. 36, 46, 223, 226-227, 242, 777:

²¹ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 791: К. Watkins, "God", "Antiquitates Indogermanicae", Innsbruck, 1974, ss. 101-110:

²² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., сс. 227, 791.

²³ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 791.

²⁴ Հմմտ. Գ. Ջաֆուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 49:

գ) Այնուհետև, արմատի մյուս՝ երրորդ տարբերակն է հ.-ե. *t'iy - «աստված» ձևը, որի համար նախնական էր «օր» իմաստը²⁵: վերջինս լավագույնս արտացոլված է ոչ միայն անատոլիական լեզուներում, այլև հայերենում. հմմտ. անատ. *Tiu- (խեթ. Šiu-, լուվ. Tiū a-, այլև Tiū at- «արևի աստված», պալ. Tij a- և այլն), ինչպես նաև (ըստ իս)՝ հայ. տիւ «ցերեկ», թերևս նաև՝ ուրարտ. Šiy (inō) «աստված» (դիցանուն)²⁶, խուտ. Šimigi): Գ. Ջահուկյանը հայ. տիւ-ը բխցնում է հ.-ե. *dei- ձևից²⁷: Ավելացնենք, որ հ.-ե. *t' iy - արմատի այլ լեզուներում առկա արտացոլումներից են՝ հհմդ. div-, divya- «աստվածային» (հմմտ. հայ. տուրնջեան), հուն. δῖ ος, լատ. dī us (<*diu ios «աստվածային»)՝²⁸:

Ըստ այսմ, հ.-ե. նախալեզվի համար վերականգնվում է տարբերակային երեք վիճակ՝ արմատի ձայնավորման տարբեր աստիճաններով, որոնք ոչ միայն մյուս լեզուներում, այլև հայերենում ունեն իրենց վաղնջական արտացոլումները, և դրանք կարող են վերլուծության առնվել արմատականության մեջ կիրառելի տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքների գործադրումով:

6.2. Ինչպես տեսնում ենք, հ.-ե. ընդհանուր վիճակի համար վերականգնվող տարբերակային արմատներից միայն մեկն է, որ ավելի հին է, իսկ մյուսները համդիսանում են նրա հետագա ձևացումները՝ տարբերակները (հմմտ. *t'iy -, այլև *t'ij eյ -, *t'ej y -):

ա) Հ.-ե. *t'ej -y - > հայ. *տեյ-ւ (հնչմամբ՝ *տեյ-ու) և *t'ij -eյ - > հայ. *տի-եւ (հնչմամբ՝ *տի-եու) ձևերը ներկայացնում են հնդեվրոպական արմատի ձայնավորման աստիճանները՝ իբրև ձայնդարձի առաջին և երկրորդ աստիճաններ: Այլ կերպ ասած՝ լծորդային հիմքեր են, որոնք ենթադրում են լրիվ և զոր աստիճան²⁹: Հմմտ. ուրարտ. Šiy inō , նաև հայ. Շի(ն)ու-(ն)այր (հետագայում տեղանուն):

բ) Հայերենի առումով նկատենք, որ համեմատաբանների մի մասն առաջին աստիճանը դիտում է երկրորդային, իսկ մյուսները գտնում են, որ առաջին աստիճանի հիմքերից կազմված, այսպես կոչված, արլատիվ հոլովից առաջացած ձևերը, ունենալով նաև հ.-ե. *-n- ածանց (հավելյալ հ.-ե. *-y -/*-eյ - ածանցների), հավասարում են այն, որ տվյալ դեպքում գործ ունենք, նախ՝ այդ ածանցով բառերի տարա-

²⁵ Վ. Պիզանին և Գ. Ջահուկյանը վերականգնում են հ.-ե. *diu -, *diu- «երկնքի հայր, աստված» արմատը: St'ya V. Pisani, Ազվ. աշխ., Գ. Ջահուկյան, Ազվ. աշխ., էջ 52:

²⁶ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 792. Այլև Գ. Ջահուկյան, Ազվ. աշխ., էջ 45, 48-49:

²⁷ Հմմտ. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 57, 84: Նույնի՝ Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 45:

²⁸ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 242.

²⁹ Երկրորդ դեպքի համար հմմտ. Է. Բենվենիստի «երկանդամները» («փնտմները»): St'ya E. Benveniste, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935, pp. 170-171, etc.

հիմք (հետերոկլիտիկ) հոլովմամբ հետ (հմմտ. հայ. մանուկ>մանկան<*մանուկն, աղջիկ>աղջկան<*աղջիկն և այլն), երկրորդ՝ առաջին աստիճանի ձևը գոյություն է ունեցել ման հ.-ե. ընդհանրության շրջանում, թեև այդուհանդերձ այն ավելի ուշ գոյացում է, քան երկրորդ աստիճանինը³⁰:

գ) Այս երկրորդի օգտին է խոսում այն փաստը, որ հ.-ե. *էլ -eլ -> հայ. *տիե (հնչմամբ՝ *տիեու) ձևից առաջացած և մախահայերենում գործածված տիւ (հնչմամբ՝ *տիու) բառը հիմ գրական հայերենում հոլովվում է տարահիմք (հետերոկլիտիկ) հոլովմամբ՝ տիւ>տու(ը)ն-ը-եան (հմմտ. վաղի>ի վաղ(ը)ն-ը-եան), որ մշակակում է, թե մախագրային շրջանում տիւ, վաղի և այլն ձևերն ունեցել են այդ -ն ածանցը (հ.-ե. *ո-): Ըստ այդմ վերականգնում ենք հայ. *տիւն (հնչմամբ՝ *տիուեն)<*տիեւն (հնչմամբ՝ *տիեուեն)³¹: Այս ձևի մեջ, իր հերթին, առանձնացնում ենք մախ -ն (<հ.-ե. *ո-), այնուհետև՝ -ւ-/-եւ- (<հ.-ե. *ւ-//*-ւ- - ածանցները, որոնք հետագա ձեռքբերում են և *տի- արմատից գոյացնում են *տիւ-//*տիե տարբերակները, որոնք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում -ն ածանցով ձևերի վերականգնման:

դ) Իսկ հ.-ե. *էլ -արմատից ունենք ոչ միայն հայ. տիւ «օր» բառը (հմմտ. խեթ. šiy att- «օր», լատ. diē s «օր», հիոլ. diē «օր», այլև հհնդ. dīva «ցերեկը». հմմտ. náktam-divam «գիշերուօր»³², հուն. ἑγδιος «կեսօրին», լատ. dius «ցերեկը»³³, այլև հայ. *տու- (հնչմամբ՝ *տուու) ձևը, որը ոչ այլ ինչ է, քան բառակազմական հիմքի ձայնավորությամբ առաջացած տարբերակ, այն է՝ տի-ւ/տո-ւ (հնչմամբ՝ *տի-ու/տո-ու):

ե) Եվ վերջապես, հ.-ե. *էլ -ւ - տարբերակից, որն ավելի ուշ ձևացում է, քան մյուս տարբերակները (հատկապես՝ *էլ -ւ -)³⁴, թերևս ծագում է հայ. տեւ-եմ (<*տեիւ-եմ, հնչմամբ՝ *տեիու-եմ) բայի տեւ(*տեիւ, հնչմամբ՝ *տեիու) «ցերեկը, ցերեկվա տևողությունը» արմատը, որին այստեղ չենք անդրադառնում (թողնելով մեկ այլ առիթի):

6.3. Հայ. *տու/տիւ բառ(արմատ)ի տարբերակային վերականգնումը և ըստ հնարավորին լիարժեք ստուգաբանությունն ամենից առաջ բախվում են հ.-ե. ընդհանրության շրջանից եկող արմատի ածանցավոր և անածանց տարբերակների առանձնացմանը. մի կողմից գործ ունենք «ձայնավոր» արմատների՝ *էլ eլ -

³⁰ Տե՛ս Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 226-227: Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն աղջիկ բառի ստուգաբանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, 2, էջ 149-152:

³¹ Հմմտ. ման. *վաղիւն (հնչմամբ՝ *վաղիուեն)<*վաղիեւն (հնչմամբ՝ *վաղիեուեն):

³² Հմմտ. ման. սան. divé-dive «օրեցօր» (տե՛ս A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 50, T. Баррыу, Санскрит, М., 1976, с. 264):

³³ Հմմտ. Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 791.

³⁴ Հմմտ. Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 241-242.

*,t'ej և -, իսկ մյուս կողմից՝ «անածանց» (Schwebeablaut) արմատի՝ *t'iy -, տարբերակների՝ ընդհանրության շրջանում ունեցած հարաբերակցային գործընթացի հետ:

Ըստ այսմ անհրաժեշտ ենք համարում մշելու, որ հ.-ե. լեզուներից հատկապես հայերենը մերկայացնում է ոչ միայն ընդհանրության շրջանից եկող, այլև ինքնուրույն զարգացման ընթացքում առաջացած արմատական տարբերակայնություն: Թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի տարբերակները հին հայերենում մերկայանում են ոչ միայն բառային ձևի (հիմքակազմության), այլև իմաստի հետ կապվող բազմազանությամբ, որը պայմանավորված է հնից եկող, ինչպես մաս զարգացման պատմական և մշակութային մոր հանգամանքներով: Հյուսիսում և մեր դարիցի մերկայացուցիչները գործ են ունեցել միայն հին գրական հայերենի մեջ տեղ գտած փաստերի հետ, իսկ դրանց առաջացման և տարբերակվածության խնդիրը դուրս է մնացել ավանդական ուսումնասիրությունների ոլորտից:

ա) Հ. Աճառյանը, ոչ անկախ Հ. Հյուսիսում և Ա. Մեյերից, հայերենում առանձնացնում է տի «օր», տի «տարիք հասակ», տի «ցերեկ, ոչ գիշեր» և տեր (հնագույն գրչություն՝ տեր, այլև տերություն < տիրություն. հմտ. հայ. լեզու < *լիզու, լատ. lingua < *dingua «լեզու») «տեր, մեծ», մակ՝ «աստված» բառերը՝ իբրև հ.-ե. ծագման, ընդհանուր աղբյուրից բխող տարբերակային ձևեր՝ իմաստային որոշակի տարբերակվածությամբ: Աճառյանը մուլմպիսի ծագման է դիտում մակ հայ. դիք «աստվածներ» բառը, այնինչ հայ. դե «հոգի» բառը համարում է իրանական փոխառություն, իսկ հայ. դիք «վհուկ, կախարհ» բառը տալիս է որպես «անստույգ բառ»³⁵: Ավելին, տիեզերք և տիկին բառերի տի բաղադրիչը դիտվում է իբրև «մեծ» իմաստի կրող, որն ամենայն հավանականությամբ ավելի մախանական չէ, քան «երկինք» և «երկնքի աստված» իմաստները: Եվ ըստ այսմ, կարծում ենք, որ միանգամայն հասկանալի է դառնում Երեմիա Մեղրեցու բառարանում (Էջ 311) հանդիպող, հիշյալ տի արմատի պարզ և երկբարբառային ձայնավորմամբ արմատական տարբերակներից կրկնավոր բարդություն հանդիսացող տիք եւ տայք բառը, որ Աճառյանը բերում է բառարանի՝ «խորխոր կոչին» իմաստային մշանակումով³⁶:

բ) Գ. Զահուկյանը, հենվելով մակ մախորդ ուսումնասիրությունների տվյալների վրա, գտնում է, որ մի կողմից՝ հ.-ե. ընդհանուր *dei- ձևի կոնկրետ տարբերակներից են բխում հայ. տե, տի «օր» (սրանց հետ մակ տեր, տիկին), տի «օր, ցերեկ», ինչպես մակ երկին «երկինք», (ս)երկ «այսօր», իսկ մյուս կողմից՝ հ.-ե. ընդհանուր *deu- ձևի կոնկրետ տարբերակներից՝ հայ. տեւեւ «երկարել, ձգվել», տոկ «տևակա-

³⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, 1940: Նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 657-658, 671-673: Հմտ. Վ. Համբարձումյան, Մովսես Խորենացու «Տեմալ Սաթեհի տիկին» հատվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, 2, էջ 235:

³⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 411:

նություն, դիմացկունություն», երկար «տևական, ձգված», երկայն «երկար» ձևերը³⁷։ Դրանցից, օրինակ, երկին ձևը մշվում է հարցականով, և դա իրոք այդպիսին է՝ անկախ այդ բառի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ ստուգաբանական փորձերից³⁸։

զ) Հ.-ե. *t'iy -, *t'ij eյ - և *t'ej y - տարբերակային արմատները, բնականաբար, ունեցել են իրենց արտացոլումները վաղմջական (հ.-ե. ընդհանրությունից առանձնացած և իմքնուրույն զարգացման ուղին բռնած) հայերենի մեջ։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում միայն մշելու, որ դրանցում ամենամախանականը «լույս» իմաստն է, որից հետագայում ածանցվում են «(երևացող) երկինք» կամ «ցերեկ» իմաստները։ Հ.-ե. լեզուն կորողների առասպելական (բանաստեղծական) պատկերացումներում այդ հիմնական գաղափարը մատնամշվում է ոչ միայն ըստ էության՝ իր տարբեր կարգի հատկանիշներով («մեծություն, մաքրություն, տևականություն և այլն»), այլև դրանց մկատմամբ արտահայտվող վերաբերմունքով՝ վերագրումներով («թուիլ, խօսիլ՝ զովերգել, պաշտել և այլն»)։ Հմմտ. միմջքիստոնեական Թուե-լեաց երգեր, քրիստոնեական Արևազալի երգեր արտահայտությունները, ինչպես նաև «Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ» (Եզնիկ Կողբացի) և այլն³⁹։

Ավելացնենք, որ հ.-ե. *t'ij eյ - > հայ. *տի-եւ (գրաբարում՝ թիւ, թուիմ, հմմտ. հոմ. հուն. δέατο «թվաց, թվում էր», δῆλος «տեսանելի, երևացող»)՝⁴⁰, թուի «թվում է» ձևերի մախանական իմաստն է «ասել, պատմել», իսկ հետագայում նաև՝ «զովերգել (Աստծուն)» (բանավոր մտածողությամբ՝ «Աստված կանչել»), «արևազալը զովերգել»։ Եվ այդ իմաստ(ներ)ը կան ուրարտերենին անցած *tia(u)* «ասել, պատմել» բառում, որից էլ ամենայն հավանականությամբ, ամենամախանական իմաստի պահպանումով՝ ուրարտ. *Diau(e)h i > Sայք* տեղանունը⁴¹։

Իսկ հին հայ. տէր (տի-այր) և տիկին բաղադրությունները մի տեսակ նորակազմություն են գրաբարի մեջ՝ թերևս հակադիր եզրեր լինելու գործառական բաշխվածությամբ, սկզբնապես որպես այդպիսին, այնուհետև քրիստոնեական ոլորտի առումով։ Այնինչ, մախագրաբարյան, եթե ոչ նաև ավելի վաղ ժամանակներում պիտի ունեցած լինեն ոչ միայն ձևային, այլև իմաստային մախանականություն։ Հայ.

³⁷ Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц. Р. Арутюнян, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, с. 32-33, 56-57: Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, էջ 117-118, 217 և այլն։

³⁸ *Երկին* բառի նոր ստուգաբանության մեղադրանքն այնքան անհիմն է, որ միայն ելնելով հիմքում ընկած հ.-ե. արմատի իմաստային (թեմատիկ) կառուցվածքից, այլև մկատի ունենալով հայերենում այդ արմատի տարբերակային արտացոլումների ուսումնասիրման անհրաժեշտությունը։

³⁹ Մ. Աբեղյանը *թուեղեաց երգեր* արտահայտությանը տվել է այլ բացատրություն։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 84-89։

⁴⁰ Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 227, 791.

⁴¹ Ըստ Մ. Խաչիկյանի՝ ուրարտ. *tiwə* «խոսք, իր՝ բան», *tiža*, *tiž-nə* «նույնը», *tuwə* «աստծու հատկանիշը»։ Տե՛ս М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985, сс. 48-49.

տէր (տի-այր) բառի (հարաբերականորեն) մախնականը, թեկուզ միջանկյալ օղակ, պիտի եղած լինի *տի-(հ)այր (*տիւ-(հ)այր) <հ.-ե. *t'iey (s)-p[^h] t[^h]er- «հայր-աստված» (հմմտ. հհմդ. Dyáus pitá «հայր-աստված», «Երկինք-աստված», հուն. Ζεύ πάτερ (կոչ. հոլ.), լատ. Iūpiter «Թուպիտեր», լուվ. tatiš Tiü az «աստված-հայր», մակ հին ռուս. Спрудогъ և այլն⁴²: Հմմտ. մակ մի կողմից՝ խուռ. Teš ub ուրարտ. Teyš օ ba//Teyš ebā «ամպրոպի աստված» և մյուս կողմից՝ ուրարտ. Tošpā (<*Tor°spā, հմմտ. աքքադ. Turšpa, ընդ որում Tur-ի համար՝ հիւլ. Τῦρ «պատերազմի աստված», այլև Τυšpa⁴³: Իսկ տիկին բառի դեպքում հավանաբար կատերազմի է իբրև մախնական դիտել *տի-մայր (<*տիւ-մայր, հմմտ. Դեմետրե<հուն. Δημήτηρ «երկրագործության աստվածուհի») ձևը՝ այն հանգեցնելով հ.-ե. (վերականգնելի) *t'iey (s)-mā t[^h]er- «մայր-աստված» բաղադրությանը, եթե ընդունենք, որ իմաստային և գործառական ինչ-ինչ հիմունքներով պիտի տեղի ունեցած լինի մայր բաղադրիչի փոխարինում կին բաղադրիչով, ընդ որում բառիմաստային տարբերակների բաղադրության (կոմտամիմացիայի) պայմաններում:

6.4. Վերևում հայ. *տուած ձևի մեջ առանձնացրի՞մք *տու (հնչումով՝ *տոու) արմատը (հիմքակազմական բաղադրիչը), ուստի -ած բաղադրիչը ներկայանում է իբրև առանձին երևույթ: Վերջինիս վաղմջական և հնագույն հայերենի փուլերում ունեցած հիմքակազմական (բառակազմական) արժեքի մասին մինչև օրս չունենք հավաստի բացատրություն:

ա) Այդ -ած բաղադրիչը մինչև այժմ քննության է առնված հին գրական հայերենի տվյալների հիման վրա՝ ծագման պարզաբանմանը վերաբերող որոշ (հնարավոր համարվող) մեկնաբանումներով⁴⁴:

Գ. Զաֆուլյանը գտնում է, որ հին հայ. -ած վերջածանցը մի կողմից հանդես է գալիս այնպիսի կազմություններում, որոնք «հետագայում դերբայացել են», մյուս կողմից կազմել է այնպիսի ձևեր, որոնք թերևս տարբեր են մախորդ տիպի կազմություններից: Իսկ վերջածանցի ծագման վերաբերյալ նշվում է, որ «ծագում է ածել բայի արմատից (հմմտ. գրաբ. «գութ ածող»): Այս ամենով հանդերձ նշվում է մակ, որ «հնարավոր է համարվում մակ գոյականակազմ -ած-ի հնդեվրոպական ծագու-

⁴² Ավելի մանրամասն տե՛ս T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 777, 791-797. Հմմտ. C. Watkins, The American Heritage Dictionary of Indo-European Roots, Boston, 1985, pp. X VII, 10.

⁴³ T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 36, 271, 799. Հմմտ. М. Л. Хачикян, указ. соч., сс. 19, 34-36, 40, 45, 48, 58-59, 74, 117, 134, 143, 147.

⁴⁴ Տե՛ս J. Greppin, Classical Armenian nominal suffixes, Wien, 1975: Գ. Զաֆուլյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, այլև 1995, 1: Նույնի՝ Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», պրակ. 2, Երևան, 1998, էջ 5-48:

մը՝ հ.-ե.՝ *g' > հայ. ծ անցմամբ. հմմտ. հուն. ἄρπας, -άρος «թալանչի, ավարառու, թալան, ավար»՝ հղելով Գրեպիհի հիշյալ աշխատանքի⁴⁵:

բ) Այն, որ հայ. -ած. բաղադրիչն ունի հ.-ե. ծագում, որը կարելի է հիմնավորել համեմատական լեզվաբանության մոտադրյալ տվյալներով, այլև այդ տվյալների տարբերակային (վարիատիվ) քննության եղանակով, որն է կասկածի տեղիք չի կարող տալ: Կարծում ենք, որ այդ մասնիկը մոյմպես հանդես է գալիս անվանական ձևերի այնպիսի մշակակումներով, որոնք հին գրական հայերենում առանձնացել են իբրև այս կամ այն իմաստային և գործառական արժեքի կրողներ:

Հայ. -ած. մասնիկը ծագում է հ.-ե. *-os ձևային: Վերջինս, ինչպես մասն *-s ձևային հ.-ե. լեզուներում, իբրև անվանական վերջավորություններ, հանդես էին գալիս ձևակազմական և իմաստաբանական որոշակի արժեքներով: Սա հաստատվում է հնդեվրոպական լեզվաբանության մոտադրյալ ուսումնասիրությունների տվյալներով: Այսպես, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, ոչ անկախ Կ. Օիլդսից, գտնում են, որ հ.-ե. *-os և *-s վերջավորությունները կազմում էին շնչավոր կամ որպես այդպիսին ըմբռնվող առարկաների դասային անվանումների ձևերը՝ ի հակադրություն հ.-ե. *-om վերջավորության, որը կազմում էր ոչ շնչավոր (անշունչ) առարկաների դասային անվանումների ձևերը: Այնուհետև, առաջին դեպքում գործ ունենք մերգործող (ակտիվ), իսկ երկրորդ դեպքում ոչ մերգործող (օբյեկտ հանդիսացող) դասի հետ: Դրանք ըստ էության ամուսնների ուղղական և հայցական ձևերի մշակակիչներ (վերջավորություններ) են⁴⁶:

Ըստ այսմ, հայ. *տուած ձևը կապվում է հ.-ե. *t'icy -os/*t'icy -s «աստված» ձևի հետ. հմմտ. հինդ. deváh , ավ. daēva- «դև (մախմական իմաստով)», լատ. diūs «աստված», հիւլ. Τύρ («պատերազմի» աստված», լիտվ. diēvas «աստված» և այլն⁴⁷:

Հայ. *տուած ձևը գրաբար մատենագրության մեջ չի գործածվել, այլ հանդես է գալիս աստուած ձևի մեջ, որն էլ կազմված պիտի լիներ մախագրաբարյան (հնագույն կամ վաղմջական հայերենի) փուլերում: Եվ հին գրական հայերենում մասն կազմությունները թերևս դիտվել են իբրև առանձին բառեր, սակայն մախկիմում պիտի ունեցած լինեն բառակազմական (շարահյուսական միավորի) արժեք. հմմտ. առաւօտ (առաւաւտ) բաղադրյալ կազմությամբ բառը՝ ոչ միայն ձևաիմաստային, այլև շարահյուսական-գործառական առումով:

6.5. Հայ. աստուած (<աս-տուած) բառի աս- բաղադրիչը (իբրև առանձին արմատ) ամենայն հավանականությամբ ծագում է հ.-ե. *Has - «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում՝ «արև») արմատից: Ավանդական համեմատաբանության մեջ այդ արմատն ընդհանուր առմամբ ներկայացվում էր առանց կոկորդային տարր պարունակող տարբերակի առանձնացումով, այսինքն՝ «կրակ», «այրել», ինչպես մաս «չորանալ, մոխրանալ», «մոխիր» իմաստային տարբերակների կրող էր

⁴⁵ Գ. Զառուկյան, մշվ. աշխ., էջ 55, այլև 8:

⁴⁶ Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 271.

⁴⁷ Նույն տեղում, այլև էջ 375-379:

հանդիսանում հ.-ե. *as- արմատը⁴⁸: Նորագույն ուսումնասիրություններում այդ արմատին հատկացվում է ավելի հետագա իմաստ(ներ)՝ «օջախ», «գոհասեղան, գոհարան»: Հմմտ. խեթ. Ի ašša- «օջախ», մակ.՝ «գոհասեղան», լատ. āra «գոհասեղան», այլև «գոհ», օսկ. aasai «օջախի մեջ» և այլն⁴⁹: Ընդ որում գտնում են, որ այդ արմատի պարզական տարբերակը (կոկորդային տարրի կորստով) երևան է գալիս հ.-ե. առանձին բարբառային խմբերում (քացի անատոլիականից)⁵⁰:

Այնինչ հայերենում, ինչպես կարելի է նկատել ստորև, ունենք թե՛ կոկորդային տարր պարունակող և թե՛ առանց կոկորդային տարրի հանդես եկող արմատական տարբերակներ: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ հայերենը բռնում է միջին դիրք հ.-ե. մասն բարբառային խմբավորման մեջ: Ավելին, հայերենում ունենք հ.-ե. *Has- կամ *as- արմատի աճականով և առանց աճականի տարբերակային արտացոլումներ:

ա) Ավանդաբար ընդունված է, որ հայ. ազագել «չորացնել», աճիւն «(կրակի) մոխիր, ոսկորների մնացորդ հող» և ոստին «ամբողջի, չոր, ցամաք» բառերը ծագում են հ.-ե. *as- (իմա՝ *Has-) արմատից, ընդ որում վերջինիս պարզ կամ *g (մակ. *gh), *d աճականներ պարունակող տարբերակներից⁵¹: Դժվար չէ նկատել, որ հիշյալ բառերն ունեն իմաստային որոշակի ընդհանրություն՝ կապված իրենց բուն կամ մասնական նշանակման հետ:

բ) Գ. Զաֆուկյանը, նկատի ունենալով Հ. Հյուբշմանի և նրան հետևողների տեսակետները, հայ. հաս- «հասնել» արմատը բխեցնում է հ.-ե. *enek՝ ձևից⁵²: Նախ, է. հենվելով ժամանակին դեմ է եղել Հյուբշմանից եկող մասն ստուգաբանությանը՝ գտնելով, որ վերջինս հաս- արմատն անտեղի է դուրս բերել հայերենի իրանական փոխառությունների շարքից՝ նրան հատկացնելով հ.-ե. ծագում⁵³: Այնուհետև, եթե հայ. հաս- արմատին տրված լինել ավելի հիմնավոր ստուգաբանություն, և եթե վերջինիս հետ՝ ըստ ընդհանուր աղբյուրից ծագելու և ոչ թե փոխառություն լինելու ճանապարհով բացատրվեին մյաարթ. has «տարիք, ծագում», hasenag «ի բնե, ըստ ծագման» բառերը, ապա կարծում ենք, որ Հյուբշմանի մոտեցումն ավելի հիմնավոր կարող էր լինել: Ըստ այսմ կարծում ենք, որ հայ. հաս- (մակ. հաս-ակ «տարիք, տիք», հաս-ու «տեղյակ, վերահասու», հաս-ուն «լրումին հասած, հասունացած», հաս-կ-անալ «հասու լինել, իմանալ») արմատը ծագում է հ.-ե. *Has ձևից, ընդ

⁴⁸ St'u J. Pokorny, Indogermanisches etimologisches Wörterbuch, 1-2, Bern-München, 1959-1969: K. Watkins, op. cit., pp. 3-4.

⁴⁹ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 158, 203, 699, 808, 884.

⁵⁰ St'u T. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 203.

⁵¹ St'u H. Hübschmann, Armenische Grammatik, Teil 1, Leipzig, 1897, S. 464, այլև Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 46-47, Հ. Սուքիասյան, Աճականը հայերենում, Երևան, 1986, էջ 136:

⁵² Գ. Զաֆուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 52, 122:

⁵³ E. Benveniste, Éléments de parthes en arménien, "Revue des études arméniennes", 1964, tome 1, pp. 1-2:

որում կոկորդային տարրի պահպանումով, որն անշուշտ արմատի հնագույն լինելու հատկանիշ կարող է լինել:

զ) Հայերենում եզակի կիրառությամբ ունենք առանձին հաս «տիվ, ցերեկ» բառը, որն ըստ Աճառյանի հանդիպում է միայն Երեմիա Մեղրեցու բառարանում⁵⁴: Ամենայն հավանականությամբ այդ բառը մույնպես ծագում է հ.-ե. *Has- արմատից:

դ) Հին գրական հայերենում գործածվելիս է եղել մաս աստել «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել» բայը, որից և կազմվել են աստոջ «աղջիկ ուզող» փեսացու», հաստիլ «աղջկա նշանվելը» բայաձևերը: Ընդ որում աստ-//հաստ-տարբերակային արմատը մինչև այժմ չունի որևէ հավաստի ստուգաբանություն⁵⁵:

Գ. Ղափանցյանը փորձել է հայ. աստել բայի ծագումը կապել խուռ. ašti «կին, կին ամուսին» ձևի հետ՝ իբրև հայերենին անցած հնագույն փոխառություն, որը բավականին խոցելի է թե՛ հնչյունական և թե՛ մախնական իմաստաբանության տեսակետից: Գ. Զաֆուկյանը, մկատի ունենալով մաս աստել բայի մեծ ստուգաբանությունը, գրում է, որ «կան դեպքեր, երբ դժվար է ընտրություն կատարել սեմական և ոչ սեմական հին ու նոր աղբյուրների (խուռերեն, ուրարտերեն և այլն) միջև»⁵⁶: Եվ մեծ վերապահությամբ էլ աստել բայը տեղ է գտնում Գ. Զաֆուկյանի կողմից առանձնացվող խուռերենից կատարված փոխառությունների ցանկում⁵⁷:

Այնինչ, հակված ենք մտածելու, որ եթե հնարավոր լինի աստել//հաստիլ բառի հիմքում ընդունել «տարիքի լրանալը, հասունացած տարիքի լինելը» մախնական իմաստը, ապա կարելի կլինի կարծել, որ հայ. աստ-//հաստ- արմատը ծագում է հ.-ե. *Has- արմատից (հմմտ. հայ. ոստ-ին):

ե) Հին գրական հայերենում գործածված է մաս բնիկ հաստ «ամուր, հաստատուն, ուժեղ» արմատական բառը, որը ծագում է հ.-ե. *pasto-(- արմատից⁵⁸: Այդ արմատից ունենք հաստել «ամրացնել, հաստատել, ստեղծել», հաստիչ «ստեղծող», հաստուած «ստեղծված, կերտված» ձևերը: Սույն հաստ արմատական բառը և նրանից կազմված ձևերը արտահայտության պլանում որոշակիորեն համընկնում են վերը նշված հաստ- (<հաս-) արմատին, թեև բովանդակության պլանում ունեն բոլորովին տարբեր նշանակումներ: Գրավոր շրջանի հայերենում հաստել, հաստիչ, հաստուած բառերը, իբրև «ստեղծել», «ստեղծող» և «ստեղծված, կերտված» իմաստների կրողներ, շփոթվել են Աստուած «արարիչ» լուսի աղբյուր հանդիսացող և լուս տվող՝ լուսատու», ինչպես մաս հաս-, աստել//հաստել ձևերի հետ:

⁵⁴ Տե՛ս Բաղդիր Քալոյ, քննական բնագիրը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 181:

⁵⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 277: Տե՛ս մաս Դ. Ա. Капанцян, Хурритские слова армянского языка, "Известия" АН Арм. ССР, 1951, 5. То же, Историко-лингвистические работы, т. 2, Ереван, 1975, с. 279: Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, (հին շրջան), Երևան, 1961, էջ 105:

⁵⁶ Գ. Զաֆուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 466:

⁵⁷ Տե՛ս Գ. Զաֆուկյան, նշվ. աշխ., էջ 424-426:

⁵⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 49: Գ. Զաֆուկյան, նշվ. աշխ., էջ 142, 216:

Այսպես, օրինակ, մեծանշան արդյունք են Ազգաթանգեղոսի երկու տեղ գտած հետևյալ կիրառությունները. «Պաշտել զԱստուած Արարիչ, և զՈրդին Հաստիչ, և զՀոգին Կազմիչ», «Վասն դիցն, զորս կոչես դու աստուածս, ստոյգ իսկ են հաստուածք»⁵⁹: Նման իմաստային կիրառությունների հանդիպում ենք ման Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ, ինչպես ման հետագա հեղինակների երկերում:

Հ.-ե. ծագում ունեցող հիշյալ երկու կարգի արմատները և նրանցից կազմված ձևերը հայերենի հնագույն և վաղմջական փուլերում ունեցել են իմաստային կիրառության տարբեր ոլորտներ: Իսկ մախագրաբարյան, առավել ևս գրաբարի շրջանում տարբեր ոլորտներում գտնվող ձևերի միջև, բառիմաստային բաղադրության (կոնստամիացիայի) հետևանքով տեղի է ունեցել որոշակի փոխարինում: Գրավոր աղբյուրներում տեղ գտած իմաստները ժամանակի ընթացքում կայունացել են և ընդհանրացել: Վերջինս լավագույնս հիմնավորվում է հայ մատենագրության մեջ աստուած բառին տրված տարբեր կարգի մեկնությունների և բացատրությունների տվյալներով:

7. Ինչպես նկատում ենք, հայ. աստուած (քրիստոնեական շրջանում՝ Աստուած) բառն ունի հնդեվրոպական ծագում, որի համար վերականգնում ենք *Has-t' iey -os ձևը: Վերջինս հայերենի հնագույն (կամ վաղմջական) ժամանակաշրջանում առաջացած բաղադրյալ կազմություն է, որի բաղադրիչներն իրենց համարժեք արտացոլումներն ունեն հ.-ե. մյուս, առավել ևս անատոլիական լեզուներում:

ա) Հայերենի հնագույն կամ վաղմջական ժամանակաշրջանում բաղադրյալ կազմություն հանդիսացող աստուած (աս-տու-ած, հնչումով՝ *աս-տոու-ած, ավելի հին՝ *աս-տոու-աս և այլն) ձևը, ինչպես կարելի է ենթադրել, առաջացել է աստուած վերջնական բաղադրությամբ (հիմքում ունենալով տու-ած մախնական բաղադրությունը): Նկատի ունենալով բաղադրության մեծ եղանակը, ինչպես ման ժամանակագրության հետ կապված որոշ հանգամանքներ՝ կարծում ենք, որ հայ. աստուած բաղադրության մեջ բուն կամ գերակա բաղադրիչը *տու- ձևն է (ի համապատասխանություն ցեղակից լեզուների ձևերի):

բ) Ըստ այդմ հայերենի հնագույն կամ վաղմջական ժամանակաշրջանի համար վերականգնվող *Տուած ձևը կարող է դիտվել իբրև համարժեք անատոլիական, հնդիրանական, հունական և այլն ձևերին: Հմմտ. խեթ. Š ių az (<Š ių -az), պալ. Tių az (<Tių -az), լուվ. Tių at (<*Tių -at), հհնդ. Dyauh - (<*Dya-uš), հուն. Ζεϋς (<*Ζε -v ς , սեռ. հոլ. Διός <*Δι -o ς), լատ. deus (հլատ. Diouis<*Diou-is), միկ. հուն. di-we և այլն:

գ) Առայժմ ձեռնպահ մնալով հիշյալ և մեծ կարգի ձևերի գործածության, դրանցում գործող հնչյունական համապատասխանությունների ժամանակագրության հետ կապված հարցերի առաջադրումից՝ հարկ ենք համարում նշելու, որ հայ.

⁵⁹ Ազգաթանգեղոս Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Էջմիածին-Տփղիս, 1909, էջ 34, 40:

***տու-** ձևից առաջացած (կամ նրա հիման վրա բաղադրված) ***տուած** (իբրև դիցաբանական անվանում՝ ***Տուած**) ձևը ամենայն հավանականությամբ պիտի եղած լինի հայոց բնիկ՝ հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լույսի», հետագայում՝ «աստծու») անվանումը՝ «(արևային՝ ցերեկվա) լույս», «լույսի աղբյուր (օջախ)» և «լույս տվող՝ լուսատու» նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական) իմաստների նշանակումով:

դ) Հայ. ***տուած** (***Տուած**) բառի՝ իբրև դիցանվան (գերագույն աստվածության անվանման՝ թեոնիմի) տարբերակային (վարիատիվ) մոտեցումով իմաստաբանական-տիպաբանական վերլուծությանն անդրադառնալու ենք մեկ այլ աշխատանքում՝ նվիրված հայոց դիցանունների ծագումնային հնարավոր վերականգնումներին, համեմատական-տիպաբանական վերլուծությանը:

ե) Հայ. աստուած բաղադրությունը, իբրև բառային միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան 5-րդ դ. արդեն որպես որոշակի հասկացության անվանում հանդիսանալը և ըստ այդմ առանձին բառի արժեքով, ավելի կոնկրետ նշանակությամբ գործածվելը: Եվ պատահական չէ, որ հետագա հեղինակներն իրենց երկերում տարբեր առիթներով փորձում են այդ բառին տալ այս կամ այն բացատրությունը, մեկնաբանել բառի հիմքում ընկած հասկացության նշանակությունը: